

— Այդ խօսքերը դիմալու չափ ես էլ կարդալ գիտեմ, բայց ահա այդտեղ է ձեզ պես տղայոց կարճամտութիւնը, որ կարդացածնիդ չէք հասկնար եւ բաղդատելու կարողութիւն չունիք:

— Ի՞նչ կ'ըսես, մօրեղբայր իմ, այս խօսքերն որոշ եւ յայտնի են, մեկնութեան կարօտութիւն չունին:

— Ինչպէ՞ս չունին. Զրիստոս այդ խօսքը գրուցեց եւ հազիւ քիչ մը ժամանակ անցաւ՝ ահա Պետրոս իր աշակերտը ուրացաւ, եւ ոչ միայն ուրացաւ անպիտանը, այլեւ նզովեց ինչպէս գրուած է Աւետարանին մէջ...

— Բայց դու ձեռքդ դիրք չես առնուր, ուսկի՞ց գիտես այս բաները:

— Յիմա՛ր, ես քեզի եւ քու նմաններուդ պէս գլուխս հազար անպէտք խառնաշփոթ բաներով չեմ լեցնէր... պէտք եղածը միայն երբ կը լսեմ կը պահեմ եւ կը բաղդատեմ. բայց դու լաւ մտիկ ըրէ իմ խօսքս եւ պատասխան տուր:— Ես ըսի թէ այդ Պետրոսը, որ վատ գինուոր էր նաեւ՝ ահագին սրով ականջ մը միայն կրցեր էր կտրել եւ Զրիստոսի աշակերտաց՝ Յուդայէն վերջ ամենէն անպիտանն էր՝ վասնզի նա միայն ուրացաւ, Զրիստոս գիսք չուրացաւ եւ դարձեալ իւր աշակերտաց մէջ զինք ընդունեցաւ, եւ մենք Պօղոսի հաւասար զինք սուրբ եւ գլխաւոր առաքեալ կը դաւանինք...

— Բայց Պօղոս ուրիշ, Պետրոս ուրիշ...

Ի՞նչ ուրիշ, մենք կը տօնենք այդ երկուքը միւս սուրբ առաքելոց հետ, եւ որ զարմանալին է, «գլխաւոր առաքեալ» այս երկուքը կը համարինք, որոց մէկը կուրանայ եւ միւսը քրիստոնէսայք կը հալածէ: Զրիստոս, որ աստուած է, մեծասիրտ է, մարդկանց առերես ուրացութեան գիտէ ներել. այդ խօսքը գրուցեր է մեր աչքը վախցնելու համար ամեն վայրկեան ուրացութիւնը խաղալիք չընենք, բայց եթէ ինք մեր վիճակին մէջ գտնուէր...

— Տէ՛, մօրեղբայր իմ, հայիոյութիւն է ըրածդ:

— Տղա՛յ, դու լռէ՛, մտի՛կ ըրէ իմ խօսքս վերջացնեմ: Այսպէս ըսեմ, եթէ այդ առաքեալները մեր վիճակին մէջ գտնուէին՝ չորս տարի հայիոյութիւն, թուք ու մուր, ծեծ ու փետ, շղթայ երող արեւուն եւ անձրեւին տակ քար, հող, աղբ կրել պարտաւորէին, արեւն վկայ, որ տասներկուքն էլ Զրիստոս կուրանային... Կա՛ց, խօսքս մ'ընդհատեր... Եւ ի՞նչ մարդ էին այդ առաքեալները. Պարթեւաց ցեղէն իջած Կամսարականներ էին, թէ Մամիկոնեանց Մուշեղներու, Վարդաններու,